

ԵՂՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2019 թվականի
փետրվարի 21-ին կայացած Գիտական Խորհրդի N8 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 30-ը (ցուցակը կցվում է)

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը ամբիոններում /զեկ ամբ.վարիչներ/
2. Աշխատանքային կարգապահությունը ֆակուլտետում /զեկ.փոխդեկան Ա.Գրիգորյան/
3. ՈւԳԸ գիտական ղեկավարի հաղորդումը կատարած աշխատանքների վերաբերյալ /զեկ. Ռ.Ս.Մովսեսյան/
4. «Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ /զեկ ամբ.վարիչ Հ.Ս.Բալյան /
5. Գիտական հաղորդում
6. Ընթացիկ հարցեր

Օրակարգը հաստատելուց հետո

1. **ԼՄԵՑԻՆ. Ն.Հարությունյանի** հաղորդումը ամբիոնում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ: Նա նշեց, որ ամբիոնում ավարտական աշխատանքների կատարումն ընթանում է ըստ սահմանված ժամանակացույցի: **Ս.Հայրոյան** - ժամանակին բոլոր թեմաները տրված են, հաստատվել են թեմայի ղեկավարները, աշխատանքային գրաֆիկները: **Դոց.դոց Շ.Խաչատրյանը, Գ.Մարկոսյանը, Հ.Բալյանը և Պ.Դավթյանը** նշեցին, որ ամբիոնների բոլոր ուսանողներն ընտրել են իրենց ավարտական աշխատանքի թեմաները և իրականացնում են ավարտական աշխատանքներն իրենց ղեկավարների հետ՝ համաձայն նախօրոք հաստատված աշխատանքային գրաֆիկի: **Շ.Խաչատրյանը**

նշեց, որ խնդիրներ են առաջանում որոշ անբարեխիղճ ուսանողների հետ: **Գ.Ալեքսանյանը** մանրամասնորեն խոսեց ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ, դիմեց ավարտական աշխատանքների ղեկավարներին խստապահանջ և հետևողական լինել և խնդիրներ ծագելու դեպքում ամբիոններում այն քննարկման հարց դարձնել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

դոց.Մ.Գրիգորյան. - Այսօր ասում ենք խնդիր չկա, ամեն ինչ լավ է, իսկ ատեստավորման քննությունների ժամանակ բացասական պատասխանների դեպքում ղեկավարներն ասում են – Ի՞նչ անենք, չեն աշխատել, այդպես չի կարող լինել, որ ամբիոններում քննարկումների ժամանակ ամեն ինչ լավ լինի, իսկ հետո՝ վատ - ասաց Մ.Գրիգորյանը: Նա կոչ արեց ամբիոնի վարիչներին լուրջ վերաբերեն ավարտական աշխատանքների կատարմանը և ցավով նշեց, որ կան թեզերի և ավարտական աշխատանքների ղեկավարներ, ովքեր մատների արանքով են նայում քննարկվող հարցին: Շեշտեց տվյալ հարցում ամբիոնի վարիչների առաջնային դերի մասին և առաջարկեց ամբիոնի վարիչներին ավարտական աշխատանքի ղեկավարներ ընտրելիս խիստ պահանջներ ներկայացվեն:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

2. ԼՍԵՑԻՆ. Փոխդեկան Ա.Գրիգորյանի հաղորդումը “աշխատանքային կարգապահությունը ֆակուլտետում թեմայով”: Նա նշեց, որ պարապմունքները նոր են սկսվել, ամեն օր ուսանողների բացակայությունները ստուգվում են, գրանցվում դասամատյաններում: Քննարկվում են ամսվա ընթացքում բացակայության արդյունքները կուրսերում: Խոսեց նաև ծխելն արգելված լինելու մասին, ինչն առանձին ուսանողների կողմից անտեսվում է և չի պահպանվում, որի հետևանքով ուսանողները ներկայացվում են պատասխանատվության: Ա.Գրիգորյանը խոսեց ֆակուլտետում աշխատանքային առողջ մթնոլորտի մասին: Նշեց նաև ղեկնաստի կողմից աշխատակիցների հաճախումների ստուգումների վերաբերյալ: Ա.Գրիգորյանը մեկ անգամ ևս հիշեցրեց աշխատանքային կանոնակարգով սահմանված աշխատաժամերը՝ 9.15-16.45:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

պրոֆ.Վ.Վարդանյանն իր ելույթում կոչ արեց դասախոսներին ժամանակին մտնել լսարան:

դոց.Մ.Գրիգորյանը հանձնարարեց ամբիոնի վարիչներին հետևողական լինել աշխատակիցների (դասախոս, լաբորատորիայի վարիչ, լաբորանտ) բացակայություններին: Իր խոսքում Մ.Գրիգորյանը նշեց, որ բացակայող աշխատակիցը պարտավոր է տեղյակ պահել ամբիոնի վարիչին և անհարգելի չբացակայել: Նշեց նաև բացակայությունների ևս մեկ հանգամանք, որը բխում է լաբորանտների ծանրաբեռնված չլինելուց և որևէ գիտական աշխատանքում ընդգրկված չլինելուց:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

3. ԼՄԵՑԻՆ. Ռ.Մովսեսյանի հաղորդումը (ՈւԳԸ գիտական ղեկավար) հաղորդումը կատարած աշխատանքների վերաբերյալ: Ռ.Մովսեսյանը մանրամասնորեն ներկայացրեց կայացած գիտաժողովների ժամանակացույցը: Բարձր գնահատեց ՈւԳԸ կատարած աշխատանքը և ուրախությամբ նշեց, որ միջֆակուլտետային մասշտաբով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ՈւԳԸ-ն հերթական անգամ 1-ին տեղն է զբաղեցրել: Մովսեսյանը նշեց, որ 1ինը լինելը հիմնականում բխում է ՈւԳԸ-ի կողմից տարվող ամենօրյա և հետևողական աշխատանքից: - ՈւԳԸ-ը մեծ աշխատանք է կատարում նաև կազմակերպում է հանդիպումներ 1-ին կուրսեցիների հետ, որտեղ մանրամասն ներկայացվել է ՈւԳԸ-ի դերը ուսումնական ոլորտում և ուսանողական կյանքում: Ռ.Մովսեսյանը ցավով նշեց “Երկրաբանություն” սեկտորի բացակայության մասին: Նշվեց նաև, որ ՈւԳԸ-ի 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանը հաստատման կներկայացվի ապրիլին:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. **պրոֆ.Վ.Վարդանյանը** – ե՞րբ կտպագրվեն մայիսին կայացած գիտաժողովի նյութերը: **Դոց.Գ.Ալեքսանյան** խնդրեց հետևողականություն ցուցաբերել և խմբագրական կազմում ընդգրկված աշխատակիցներին ակտիվ մասնակցեն անցկացված զեկուցումների խմբագրմանը: **Դոց.Շ.Խաչատրյանը** փորձեց տեղեկանալ հոդվածների տպագրման ընթացակարգի վերաբերյալ, մասնավորապես՝ արդյո՞ք կա ամբիոնի եզրակացության անհրաժեշտությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ուսանող Ատլուկյան Վ. ունեցել ենք գերազանց արդյունք համալսարանում ֆակուլտետային ՈւԳԸ-ների կտրվածքով: Բնագիտական ֆակուլտետներից միակն ենք, որը 4 անգամ անընդմեջ գերազանց արդյունք է ցուցաբերում: Կոչ արեց աջակցել այն ուսանողներին ովքեր ունեն գիտական պոտենցիալ, ինչպես նաև կարևոր համարեց հողվածի գիտական նորույթի ապահովելը գիտական ղեկավարի կողմից:

դոց.Ս.Սուվարյան - եկեք մասնակցեք ՈՒԳԸ զեկուցումներին և կտեսնեք թե՛ որակը և թե՛ նորույթը: Ուրախ եմ ՈւԳԸ-ի կողմից ձեռք բերած հաջողությունների հարցում, սակայն միշտ կան անելիքներ: Նշեց նաև, որ մեծ է ամբիոնի դերը նշված աշխատանքներում: - ՈւԳԸ-ի աշխատանքին մասնակցող ուսանողը մեր վաղվա լավագույն կադրն է և արժանի փոխարինողը,-ասաց Ս.Սուվարյանը: Ցավով նշեց, որ ամբիոնները երաշխավորություն են տալիս հողվածների տպագրման վերաբերյալ, որտեղ տպագրելուց հետո գտնվում են թերություններ, ինչը խոսում է որ ամբիոնը դեռ անելիքներ ունի նշված ոլորտում:

ՈՐՈՇԵՑԻՆ. ընդունել ի գիտություն

4. ՀՄԵՑԻՆ. «Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության» ամբիոնի վարիչ Հ.Ս.Բայանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերբերյալ: (Հաշվետվությունը կցվում է)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյան - Ամբիոնի դասախոսական անձնակազմը ունակ է իր առջև դրված խնդիրները լուծելու, մեծ պոտենցիալ ունի: Դեկանատն ընդառաջում է, օգնում է ամբիոնին իր առջև դրված խնդիրները լուծելու: Առաջարկում եմ կատարած աշխատանքը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետու ժամանակաշրջանում «Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության» ամբիոնի վարիչ Հասմիկ Սողոմոնի Բայանի կողմից կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

5. ՀՄԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Բահման Բահադորի գիտական հաղորդումը «Անվագ քաղաքի տարածքի զարգացման և նրա էկոլոգիական վիճակի վրա ռելիեֆի ազդեցության գնահատումը

աւրո և տիեզերական նկարների վերծանման միջոցով» (ԻԴ.03.01

«Աշխարհագրություն») թեմայի վերաբերյալ:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.

պրոֆ.Ս.Հ.Հայրոյան – 1) Պահպավել է արդյոք քաղաքի գեն.պլանը շինարարության ընթացքում և եթե ոչ պարզվել է արդյոք շեղման աստիճանը: 2) Խնդիրների բնույթը՝ երկրաբնապահպանական է արդյո՞ք թե աշխարհագրական:

դոց. Վ.Ս.Բալասանյան - Ի՞նչ հեռավորության վրա և երբ է գրանցվել տարածքի ամենատուժգին երկրաշարժը:

պրոֆ.Թ.Գ.Վարդանյան – Արդյո՞ք տրամաբանական է համարում ասպիրանտը 4 դրույթ պաշտպանելու դեպքում ներկայացնել 21 առաջարկություն:

դոց. Մ.Ա.Գրիգորյան - Ո՞րն է թեմայի նորույթը և արդիականությունը:

Բոլոր հարցերին Բ.Բահադորին տվեց հանգամանալից պատասխաններ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

պրոֆ.Վ.Ռ.Բոյնագրյանը /գիտական ղեկավար/ – Շնորհակալություն հայտնեց հարցերի համար, ինչը ի օգուտ ասպիրանտի է: Ներկայացված աշխատանքը արդի է, սակայն զեկույցում կա ներկայացման բնույթի հետ կապված խնդիր: Վ.Բոյնագրյանը նշեց նաև, որ թեման գտական հետաքրքրություն ունի, ստացված արդյունքը նույնպես: Նշեց, որ աշխատանքում կան բացթողումներ, որոնք տեխնիկական բույթի են: Աշխատանքը բավարարում է թեկնածուական աստիճանի ներկայացվող պահանջներին և առաջարկեց երաշխավորել ներկայացնելու հրապարակային պաշտպանության:

դոց.Շ.Վ.Խաչատրյան – Ներկայացված սեղմագրում հստակ է ասպիրանտի կողմից կատարած աշխատանքը, սակայն ձևակերպումները որոշ տեղերում հստակ չեն:

դոց.Պ.Գ.Դավթյան – Աշխատանքը մի քանի անգամ քննարկվել է ամբիոնում, կարծիքը դրական է, լավ է, որ այն ներկայացված է հայերեն: Պ.Դավթյանը նշեց, նաև, որ աշխատանքը մի քանի անգամ խմբագրվել է մասնագետի կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բահման Բահադորի «Անվագ քաղաքի տարածքի զարգացման և նրա էկոլոգիական վիճակի վրա ռելիեֆի ազդեցության գնահատումը աւրո և տիեզերական նկարների վերծանման միջոցով» (ԻԴ.03.01 «Աշխարհագրություն»)

վերնագրով աշխատանքը երաշխավորել մասնագիտական խորհրդում հրապարակային պաշտպանության:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան